ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 08

գ"Ջրաբեր 30 սեպտեմբերի 2025թ.

2025 թվականի սեպտեմբերի 30-ին, ժամը 18:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցեն՝ գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց թիվ 13 վարչական շենք) կայացավ «Զեփյուռ երեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղում գտնվող լիթոիդային պեմզայի հանքավայրի Հարավ-Արևմտյան երկարացման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների 1-ին փուլը: Հանրային քննարկումների մասին հրավերը հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» թերթում, Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ (տես՝ http://byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=84d808c3-56c7-4997-9bc0-212e9f7e47d3 հղումով), ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև փակցվել էր Բյուրեղավանի համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերում առկա ցուցատախտակներին:

Մասնակցում էին՝

«Զեփյուռ երեք» ՍՊԸ-ի տնօրեն Հովիկ Առաքելյանը, ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Գուրգեն Հակոբյանը, Էդուարդ Հարությունյանը, Պարույր Պապիկյանը, Ջրաբեր գյուղի վարչական ղեկավար՝ Բորիկ Դավթյանը, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Հասմիկ Սիմոնյանը, Ջրաբեր բնակավայրի բնակիչներ (մասնակիցների ցուցակը կցվում է):

Օրակարգում՝ Ջրաբեր գյուղում գտնվող լիթոիդային պեմզայի հանքավայրի արդյունահանման իրավունքի ընդլայնման և երկարացման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ (1-ին փուլ):**Լսեցին՝** Բացման խոսքով հանդես եկավ Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Բորիկ Դավթյանը:Այնուհետև խոսքը փոխանցեց ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանին: Վերջինս ներկայացրեց հանքավայրի արդյունահանման աշխատանքները:

«Զեփյուռ երեք» ՍՊԸ-ի տնօրեն Հովիկ Առաքելյանը, ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Էդուարդ Հարությունյանը և Գուրգեն Հակոբյանը պատասխանեցին համայնքի ազդագիր բնակիչների հարցերին: Քննարկումներ եղան հանքավայրի արդյունահանման տարբեր աշխատանքների վերաբերյալ, ընկերության ներկայացուցիչները պարտավորվեցին իրենց պարտավորությունները ժամանակին կատարել, իսկ համայնքի բնակիչները հավանություն տվեցին լիթոիդային պեմզայի հանքավայրի արդյունահանման իրավունքի երկարացման վերաբերյալ հայտին:

Ջրաբերի վարչական ղեկավար՝ Բ. Դավթյան